ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունների Կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում գիտական ընդհանուր տարածության վերստեղծման եւ պահպանման համար համաձայնեցված միջոցների մասին Անկախ Պետությունների Համագործակցության պետությունների ղեկավարների Խորհրդի 1995 թվականի փետրվարի 10-ի՝ Որոշմանը համապատասխան,

գործելով Տնտեսական միության ստեղծման մասին 1993 թվականի սեպտեմբերի 24-ի՝ Պայմանագրի դրույթների հաջորդական իրականացման ուղղությամբ,

անհրաժեշտ համարելով անհապաղ միջոցների ընդունումը որպես Կողմերի գիտությանը օժանդակություն ցուցաբերելու, գիտատեխնոլոգիական ներուժը պահպանելու եւ զարգացնելու ազգային անվտանգության կարեւորագույն պայման,

ընդունելով այդ ներուժի միավորման անհրաժեշտությունը ժամանակակից պայմաններում Կողմերի հոգեւոր եւ տնտեսական զարգացման համար առավել լրիվ եւ արդյունավետ օգտագործման նպատակով,

զարգացնելով ջանքերը, որոնք ձեռնարկվում են գիտության եւ տեխնոլոգիայի բնագավառում համագործակցության մասին Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների նախկինում ստորագրված համաձայնագրերի շրջանակներում, այդ թվում՝

1992 թվականի մարտի 13-ի՝ Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների շրջանակներում գիտատեխնիկական համագործակցության մասին,

1992 թվականի մարտի 13-ի՝ Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում ուղղակի գիտատեխնիկական կապերի մասին,

1992 թվականի մարտի 13-ի՝ Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում գիտական, գիտամանկավարժական կադրերի պատրաստման եւ նրանց որակավորման վերաբերյալ փաստաթղթերի նոստրիֆիկացման բնագավառում համագործակցության մասին,

1992 թվականի մարտի 13-ի՝ Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում գիտատեխնիկական օբյեկտների համատեղ օգտագործման մասին,

1992 թվականի մարտի 13-ի՝ Ստանդարտացման, չափագիտության եւ սերտիֆիկացման բնագավառում համաձայնեցված քաղաքականության վարման մասին,

1992 թվականի հունիսի 26-ի՝ Գիտատեխնիկական տեղեկատվության միջպետական փոխանակման մասին եւ այլն,պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

1. Կողմերը համատեղ եւ առանձին կձեռնարկեն համաձայնեցված միջոցներ Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում գիտատեխնոլոգիական ընդհանուր տարածության ստեղծման համար: Գիտատեխնոլոգիական ընդհանուր տարածության ձեւավորումը կիրականացվի փուլ առ փուլ Համագործակցությունում ինտեգրացման գործընթացների զարգացման հետ փոխկապակցվածությամբ:

2. Սույն Համաձայնագրում պետության գիտատեխնոլոգիական տարածություն ասելով հասկացվում է գիտության եւ տեխնոլոգիայի գործունեության եւ զարգացման ապահովման միջավայրը, որը բնութագրվում է պետական գիտատեխնոլոգիական միասնական քաղաքականությամբ՝ հիմնված համապատասխան նորմատիվ-իրավական հիմքի վրա եւ, որը ներառում է ազգային առաջնայնությունների, գիտատեխնոլոգիական զարգացման ղեկավարման համակարգի, գիտական եւ ինժեներային կադրերի ֆինանսավորման, պատրաստման եւ ատեստավորման, գիտատեխնիկական տեղեկատվության, ստանդարտացման, չափագիտության, սերտիֆիկացման, գիտատեխնիկական գործունեության արդյունքների

վրա իրավունքների պահպանության ցանկերը:
Համագործակցության մասնակից պետությունների գիտատեխնոլոգիական ընդհանուր տարածություն ասելով հասկացվում է միջավայր, որը բնութագրվում է գիտության եւ տեխնիկայի զարգացման մեջ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող առաջնային ուղղություններով այդ պետությունների կողմից համաձայնեցված քաղաքականության անցկացումով, նրա առանձին բաղադրամասերի բովանդակության եւ ազգային-իրավական համապատասխան հիմքերի ներդաշնակեցմամբ: Գիտատեխնոլոգիական ընդհանուր տարածությունը նախատեսում է նաեւ Համաձայնագրի յուրաքանչյուր մասնակից պետությանը գիտատեխնոլոգիական տարածությունների, գիտատեխնոլոգիական ապրանքների շուկաների եւ Համաձայնագրի մյուս մասնակիցների ծառայությունների օգտագործման հնարավորության տրամադրումը՝ Կողմերի ազգային օրենսդրություններին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 2

Գիտատեխնոլոգիական ընդհանուր տարածության ստեղծման նպատակով եւ ի զարգացումն Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների շրջանակներում գիտատեխնիկական համագործակցության մասին 1992 թվականի մարտի 13-ի՝ Համաձայնագրում ամրագրված պայմանավորվածությունների, Կողմերը կապահովեն կոնկրետ խնդիրների լուծմանն ուղղված փոխգործակցությունը.
գիտության եւ տեխնոլոգիաների բնագավառում ինտեգրացիոն գործընթացների համակարգման արդյունավետ կազմակերպչական մեխանիզմի ստեղծում,
համատեղ գիտական հետազոտությունների օժանդակության համար ֆինանսատնտեսական մեխանիզմների եւ փոխադարձ հաշվարկների ու վճարումների համակարգի մշակում,
գիտական հետազոտությունների, փորձարարական եւ փորձնական նմուշների ու տեխնոլոգիաների փոխանակման, գիտական գրականության, գիտատեխնիկական տեղեկատվության, սարքերի, փորձարարական սարքավորման, գիտահետազոտական աշխատանքների համար ռեակտիվների եւ այլ նյութերի փոխանցման դեպքում ԱՊՀ շրջանակներում մաքսային սահմանափակումների վերացում,
մատչելիության ապահովումը առեւտրային բնույթ չունեցող բաց գիտատեխնիկական տեղեկատվության եւ տվյալների նկատմամբ,
սույն Համաձայնագրի մասնակից պետությունների գիտահետազոտական կազմակերպությունների, գիտնականների եւ մասնագետների համար ազգային ռեժիմի տրամադրում գիտատեխնոլոգիական ապրանքների եւ ծառայությունների շուկաներում, ինչպես նաեւ բաց պետական պատվերների մրցույթներում մասնակցության դեպքում:

ՀՈԴՎԱԾ 3

Որպես սույն Համաձայնագրի իրագործման հիմնական պայման, Կողմերը դիտում են գիտատեխնոլոգիական ոլորտի առաջնայնության ճանաչումը սույն Համաձայնագրի բոլոր մասնակից պետությունների կողմից, որն արտահայտվում է նրա աջակցության եւ զարգացման նորմատիվ-իրավական հիմքի արագացված ձեւավորման անհրաժեշտության մեջ, ինչպես նաեւ այդ առաջնայնությանը համապատասխանող տվյալ ոլորտի պետական ֆինանսավորման երաշխավորված մակարդակը:

ՀՈԴՎԱԾ 4

Գիտատեխնոլոգիական ընդհանուր տարածության ստեղծմանն ուղղված, որպես առաջնահերթ միջոցառումներ, Կողմերը անհրաժեշտ են համարում պատրաստել եւ ստորագրել միջպետական եւ միջկառավարական հետեւյալ համաձայնագրերը.
միջպետական գիտական եւ գիտատեխնոլոգիական ծրագրերի ու նախագծերի ձեւավորման եւ կարգավիճակի մասին,
միջազգային գիտական կազմակերպությունների ստեղծման եւ կարգավիճակի մասին,
միջազգային գիտահետազոտական կենտրոնների ստեղծման եւ կարգավիճակի մասին,

ազգային գիտատեխնիկական ծրագրերի կատարմանը Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների գիտահետազոտական կենտրոնների, գիտնականների եւ մասնագետների ներգրավման կարգի մասին,

գիտական հրապարակումներով եւ պարբերականներով, թարգմանված օտարերկրյա գիտական եւ գիտամանկավարժական գրականության արտարժութային փոխանակման կարգի մասին,

միջգրադարանային աբոնեմենտի ստեղծման մասին:

ՀՈԴՎԱԾ 5

1. Սույն Համաձայնագրի իրագործման նպատակով Կողմերը ստեղծում են գիտատեխնոլոգիական զարգացման գծով Միջպետական կոմիտե (ԳՏԶ ՄԿ), որն իր գործունեությունը իրականացնում է սույն Համաձայնագրի անբաժանելի մասը հանդիսացող իր Կանոնադրությանը համապատասխան: ԳՏԶ ՄԿ-ն իր գործունեությունը իրականացնում է Տնտեսական միության Միջպետական տնտեսական կոմիտեին (ՄՏԿ) կից:

2. ԳՏԶ ՄԿ-ը քննարկում է գիտատեխնոլոգիական ընդհանուր տարածության ձեւավորման կոնցեպտուալ հարցերը, որոշում է գիտության եւ տեխնիկայի առանցքային բնագավառներում համագործակցության առաջնային ուղղությունները եւ ձեւերը, իր իրավասության շրջանակներում ընդունում է, իսկ անհրաժեշտ դեպքերում պատրաստում եւ ՄՏԿ միջոցով Համագործակցության պետությունների ղեկավարների եւ Կառավարությունների ղեկավարների քննարկմանն է ներկայացնում գիտատեխնոլոգիական ընդհանուր տարածության ստեղծման կոնկրետ խնդիրների լուծման հետ կապված հարցերով փաստաթղթերի նախագծեր:

3. ԳՏԶ ՄԿ կազմի մեջ մտնում են երկուական ներկայացուցիչ յուրաքանչյուր Կողմից, որպես կանոն, պետական գիտատեխնոլոգիական քաղաքականության համար պատասխանատու իշխանության գործադիր մարմնի ղեկավարը, ինչպես նաեւ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահը:

Գիտատեխնոլոգիական զարգացման գծով Միջպետական կոմիտեի կազմի մեջ մտնում են գիտատեխնիկական համագործակցության հարցերով զբաղվող ՄՏԿ կոլեգիայի նախագահի տեղակալը, ինչպես նաեւ Միջպետական գիտատեխնիկական խորհրդի (ՄԳՏԽ) նախագահը:

ԳՏԶ ՄԿ նախագահը, որն ընտրվում է ռոտացիայի հիմունքներով, մասնակցում է ՄՏԿ կոլեգիայի աշխատանքներին խորհրդակցական ձայնի իրավունքով:

4. ԳՏԶ ՄԿ գործադիր մարմնի գործառույթները դրվում են Միջպետական գիտատեխնիկական խորհրդի (ՄԳՏԽ) վրա: Դրա հետ կապված ՄԳՏԽ Կանոնադրության մեջ կկատարվեն փոփոխություններ եւ լրացումներ: Համապատասխան առաջարկությունների պատրաստումը դրվում է ԳՏԶ ՄԿ-ի վրա:

5. ԳՏԶ ՄԿ եւ ՄԳՏԽ գործում են սերտ համագործակցելով Անկախ Պետությունների Համագործակցության միջպետական եւ միջկառավարական մյուս մարմինների, ինչպես նաեւ Գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիայի (ԳԱՄԱ) հետ:

ՀՈԴՎԱԾ 6

Կողմերը ԳՏԶ ՄԿ-ին հանձնարարում են իր ստեղծումից հետո եռամսյա ժամկետում մշակել եւ ՄՏԿ նախագահության հաստատմանը ներկայացնել գիտատեխնոլոգիական ընդհանուր տարածության ստեղծմանն ուղղված առաջնահերթ միջոցառումների ծրագիրը:

Դրա մշակման ժամանակ վերլուծություն անցկացնել եւ պատրաստել համապատասխան առաջարկություններ միջպետական եւ միջկառավարական գործող պայմանագրերի ցուցակի վերաբերյալ, որոնց բովանդակությունը չի համապատասխանում ժամանակակից պայմաններին եւ վերանայում է պահանջում, ինչպես նաեւ այն փաստաթղթերի ցանկը, որոնք անհրաժեշտ է մշակել եւ ընդունել գիտատեխնոլոգիական տարածության ստեղծման եւ գործունեության իրավական ապահովման ներդաշնակեցման համար:

ՀՈԴՎԱԾ 7

1. Բազմակողմ գիտահետազոտական ծրագրերի եւ նախագծերի շրջանակներում գիտահետազոտական աշխատանքներում ԱՊՀ մասնակից պետությունների գիտնականների եւ մասնագետների մասնակցության ֆինանսավորումը, որպես կանոն, իրականացնում է համապատասխան Կողմը սեփական միջոցների հաշվին, բացառությամբ աշխատանքների, որոնք անցկացվում են պաշտոնապես հաստատված միջպետական ծրագրերի, միջազգային գիտական կազմակերպությունների եւ միջազգային գիտական կենտրոնների շրջանակներում, որոնց աջակցության համար նպատակային ձեւով կարող են ստեղծվել միավորված ֆինանսանյութական հիմնադրամներ:
2. Ընդհանուր առմամբ ինտեգրացիոն գործընթացների զարգացման, ինչպես նաեւ գիտատեխնոլոգիական ընդհանուր տարածության ձեւավորման հետ մեկտեղ, Կողմերը ԳՏՁ ՄԿ առաջարկությունների հիման վրա կքննարկեն բաժնային ավանդների հաշվին գիտատեխնիկական համագործակցության Միջպետական հիմնադրամի ստեղծման մասին հարցը:

ՀՈԴՎԱԾ 8

1. Սույն Համաձայնագրի իրագործման ապահովման համար Կողմերը համակարգված միջոցներ կձեռնարկեն ազգային համապատասխան նորմատիվ-իրավական ակտերի պատրաստման ուղղությամբ:
2. Ընդհանուր առմամբ սույն Համաձայնագրի իրագործման, հավասարապես նաեւ գիտատեխնոլոգիական ընդհանուր տարածության ստեղծման տարբեր ուղղություններով կոնկրետ խնդիրների լուծման մեջ, ինչպես նաեւ իրենց միջեւ բազմակողմ համագործակցության ծրագրերում եւ նախագծերում մասնակցությունը իրականացվում է փոխշահավետ եւ կամավոր հիմունքներով:
3. Կողմերը ձեռնպահ կմնան սույն Համաձայնագրի դրույթներին հակասող եւ այդտեղ նշված նպատակների իրագործմանը խոչընդոտող, ինչպես նաեւ սույն Համաձայնագրի մյուս մասնակից պետություններին վնաս հասցնող գործողություններից:
4. Կողմերը իրենց իրավունք են վերապահում ինքնուրույն եւ անկախ կերպով որոշելու սույն Համաձայնագրում չմասնակցող պետությունների հետ գիտատեխնոլոգիական հարաբերությունների ձեւերը եւ պայմանները:

ՀՈԴՎԱԾ 9

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ:

ՀՈԴՎԱԾ 10

1. Սույն Համաձայնագիրը ժամանակավորապես կիրառվում է ստորագրման օրվանից եւ ուժի մեջ է մտնում այն ստորագրած Կողմերի կողմից դրա ուժի մեջ մտնելու համար բոլոր անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ ծանուցումը ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից:
2. Սույն Համաձայնագրի ավանդապահն է Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր քարտուղարությունը:
3. Սույն Համաձայնագրի ստորագրման պահից մեկ տարի հետո, այն Կողմերը, որոնց համար Համաձայնագիրը ուժի մեջ է մտել, կարող են որոշում ընդունել Համաձայնագրին այն Կողմերի մասնակցության վերաբերյալ, որոնց համար Համաձայնագիրը ժամանակավորապես է կիրառվում:

ՀՈԴՎԱԾ 11

Սույն Համաձայնագիրը բաց է Անկախ Պետությունների Համագործակցության ցանկացած մասնակից պետության կողմից միանալու համար, որն ընդունում է միանալու

պահին գործող Համաձայնագրի դրույթները եւ պատրաստակամություն է հայտնում դրանք կատարել լրիվ ծավալով:

Միացումը իրականացվում է միացող պետության հետ կնքվող առանձին համաձայնագրում սահմանված պայմաններով եւ կարգով, որը նախապես համաձայնեցվում է եւ բոլոր Կողմերի հավանությանն է ենթակա դրանց ներպետական ընթացակարգերին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 12

1. Ցանկացած Կողմ կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից՝ Համաձայնագրից դուրս գալու իր մտադրության մասին առնվազն վեց ամիս առաջ գրավոր ծանուցում ուղարկելով ավանդապահին:

2. Կողմերից ցանկացածի կողմից սույն Համաձայնագրի դրույթների խախտման դեպքում, որը վնաս է հասցնում դրա նպատակների ձեռքբերմանը, մյուս Կողմերը իրավունք ունեն որոշում ընդունել այդ Կողմի նկատմամբ Համաձայնագրի կամ դրա առանձին դրույթների գործողությունը դադարեցնելու մասին, կամ որոշում կայացնել այդ Կողմին Համաձայնագրի մասնակիցներից բացառելու վերաբերյալ:

3. Կողմերի պարտավորությունների հետ կապված, այդ թվում նյութական բնույթի, հնարավոր վեճերի եւ հավակնությունների կարգավորման նպատակով, սույն Համաձայնագրի դրույթները շարունակում են գործել մասնակցությունը դադարեցրած Կողմի նկատմամբ մինչ բոլոր պահանջների լրիվ կարգավորումը:

Կատարված է Մոսկվա քաղաքում 1995 թվականի նոյեմբերի 3-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր քարտուղարությունում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած յուրաքանչյուր պետությանը կուղարկի դրա հաստատված պատճենը:

Հավելված
Անկախ Պետությունների
Համագործակցության մասնակից
պետությունների գիտատեխնոլոգիական
ընդհանուր տարածության ստեղծման մասին
1995 թվականի նոյեմբերի 3-ի՝
Համաձայնագրին կից

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԾՈՎ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Գիտատեխնոլոգիական զարգացման գծով Միջպետական կոմիտեն (այսուհետ՝ ԳՏԶ ՄԿ) ստեղծվում է Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների գիտատեխնոլոգիական ընդհանուր տարածության ստեղծման մասին Համագործակցության շրջանակներում համագործակցության գործընթացների համակարգմանը օժանդակություն ցուցաբերելու նպատակով:

ԳՏԶ ՄԿ-ն հանդիսանում է մշտապես գործող համակարգող մարմին, որն իր գործունեությունն իրականացնում է Համաձայնագրի մասնակից պետությունների կողմից կամավոր նրան տրված լիազորությունների սահմաններում:

Իր գործունեությունում ԳՏԶ ՄԿ-ն հաշվետու է Անկախ Պետությունների Համագործակցության պետությունների ղեկավարների Խորհրդին, Կառավարությունների ղեկավարների Խորհրդին եւ Տնտեսական միության Միջպետական տնտեսական կոմիտեին (ՄՏԿ), ղեկավարվում է Անկախ Պետությունների Համագործակցության Կանոնադրությամբ, Տնտեսական միության ստեղծման մասին 1993 թվականի սեպտեմբերի

24-ի՝ Պայմանագրով, Համագործակցության պետությունների ղեկավարների Խորհրդի եւ Կառավարությունների ղեկավարների Խորհրդի, ՄՏԿ որոշումներով, Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների գիտատեխնոլոգիական ընդհանուր տարածության ստեղծման մասին Համաձայնագրով, Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների շրջանակներում գիտատեխնիկական համագործակցության մասին 1992 թվականի մարտի 13-ի՝ Համաձայնագրով, Համագործակցության շրջանակներում կնքված միջպետական եւ միջկառավարական այլ համաձայնագրերով, ինչպես նաեւ սույն Կանոնադրությամբ:

2. ԳՏՁ ՄԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

2. ԳՏՁ ՄԿ գործունեության հիմնական ուղղություններն են.

ԱՊՀ մասնակից պետությունների գիտահետազոտական կազմակերպությունների, գիտնականների եւ մասնագետների միջեւ անմիջական կապերի զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծում,

պետական գիտատեխնիկական քաղաքականության եւ նրա առանձին բաղադրամասերի համակարգում եւ համաձայնեցում,

Համաձայնագրի մասնակից պետություններում գիտատեխնոլոգիական միջավայրի գործունեության նորմատիվ-իրավական հիմքի ներդաշնակեցում,

գիտության եւ տեխնոլոգիաների կարեւորագույն ուղղությունների վրա Համաձայնագրի մասնակից պետությունների ջանքերի համախմբում,

համատեղ գիտական եւ տեխնոլոգիական ծրագրերի եւ նախագծերի աջակցության համար Համաձայնագրի մասնակից պետություններում համատեղ ֆինանսատնտեսական մեխանիզմների ձեւավորում,

համագործակցության նոր ձեւերի զարգացում, այդ թվում պետական աջակցության, որոնք նպաստում են համատեղ ծրագրերի իրագործման ժամանակ այդ պետությունների ազգային գիտատեխնոլոգիական ներուժի արդյունավետ օգտագործմանը,

միջոցների մշակում եւ ընդունում, որոնք նպատակաուղղված են գիտատեխնոլոգիական ապրանքների եւ ծառայությունների շուկաների հետզհետե բացմանը:

3. ԳՏՁ ՄԿ հիմնական գործառույթները.

ԱՊՀ մասնակից պետությունների գիտատեխնիկական համագործակցության վիճակի գնահատում,

ԱՊՀ մասնակից պետությունների գիտատեխնոլոգիական համագործակցության զարգացման հետ կապված հիմնախնդիրների վերլուծություն,

ԱՊՀ մասնակից պետությունների գիտատեխնոլոգիական համագործակցության առաջնային բնագավառների որոշում,

Համաձայնագրի մասնակից պետություններում գիտության եւ տեխնոլոգիաների պետական աջակցության ցուցաբերման համար երաշխավորությունների պատրաստում,

ԱՊՀ մասնակից պետությունների գիտատեխնոլոգիական համագործակցության առավել բարենպաստ ռեժիմի ձեւավորմանն ուղղված միջոցների ընդունում,

ԱՊՀ մասնակից պետությունների գիտահետազոտական կազմակերպությունների, գիտնականների եւ մասնագետների համագործակցության արդյունավետ ենթակառուցվածքի ստեղծում,

բազմակողմ (միջպետական) ծրագրերի եւ նախագծերի ձեւավորում, միջազգային գիտական կազմակերպությունների եւ միջազգային գիտական կենտրոնների ստեղծում:

4. ԳՏՁ ՄԿ-ն իր գործառույթների իրականացման համար.

ԳՏՁ ՄԿ անդամների իրավասության սահմաններում եւ նրանց Կառավարությունների կողմից սահմանված որոշումներ է ընդունում,

ընդունում է երաշխավորական բնույթի որոշումներ,

պատրաստում եւ ԱՊՀ մարմիններին է ներկայացնում այդ մարմինների որոշումը պահանջող գիտատեխնոլոգիական համագործակցության հարցերով փաստաթղթերի նախագծեր,

Համաձայնագրի մասնակից պետությունների պետական մարմիններից

տեղեկություններ է ստանում բազմակողմ եւ երկկողմ համաձայնագրերի, Համագործակցության պետությունների ղեկավարների Խորհրդի եւ կառավարությունների ղեկավարների Խորհրդի ԳՏՁ ՄԿ իրավասության մեջ մտնող որոշումների կատարման մասին,

փաստաթղթերի նախագծերի պատրաստման համար, անհրաժեշտության դեպքում, ստեղծում է աշխատանքային խմբեր եւ ԳՏՁ ՄԿ քննարկման ենթակա հարցերով հրավիրում է խորհրդակցություններ,

սերտորեն համագործակցում է ԱՊՀ միջպետական եւ միջկառավարական մյուս մարմինների հետ, իր աշխատանքում հենվում է համաձայնեցված գիտատեխնոլոգիական քաղաքականության իրականացման վերաբերյալ իրեն երաշխավորություններ տրամադրող գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիայի, ինչպես նաեւ համատեղ ծրագրերի եւ նախագծերի փորձաքննության առաջարկությունների եւ արդյունքների վրա:

3. ԳՏՁ ՄԿ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

5. ԳՏՁ ՄԿ-ի կազմի մեջ յուրաքանչյուր Կողմից մտնում են երկուական ներկայացուցիչ, որպես կանոն, գիտատեխնոլոգիական պետական քաղաքականության համար պատասխանատու իշխանության գործադիր մարմնի ներկայացուցիչը եւ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահը: ԳՏՁ ՄԿ-ի կազմի մեջ մտնում են նաեւ ՄՏԿ-ի կոլեգիայի նախագահը, որը ղեկավարում է գիտատեխնիկական համագործակցության հարցերը:

6. ԳՏՁ ՄԿ-ի աշխատակարգը նրա կողմից ինքնուրույն է հաստատվում:

7. ԳՏՁ ՄԿ նիստերը անցկացվում են ըստ անհրաժեշտության, սակայն առնվազն տարին մեկ անգամ՝ ԳՏՁ ՄԿ-ի սահմանած ժամկետներում եւ վայրում:

8. ԳՏՁ ՄԿ-ն գլխավորում է նախագահը, որն ընտրվում է Համաձայնագրի մասնակից պետությունների իշխանության գործադիր մարմինների ներկայացուցիչներից՝ ռոտացիայի հիմունքներով: Նախագահման կարգը եւ ժամկետները որոշում է ԳՏՁ ՄԿ-ն՝ իր աշխատակարգին համապատասխան: Նախագահը ղեկավարում է ԳՏՁ ՄԿ-ի նիստերը, կազմակերպում է նրա աշխատանքը նիստերի միջեւ ընկած ժամանակահատվածներում:

ԳՏՁ ՄԿ-ի նախագահը մասնակցում է ՄՏԿ-ի կոլեգիայի աշխատանքին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

9. ԳՏՁ ՄԿ-ն ՄՏԿ-ի հետ համաձայնությամբ, տարեկան հաստատում է իր աշխատանքային ծրագիրը, որոշում է հարցերի քննարկման կարգը եւ ժամկետները:

10. ԳՏՁ ՄԿ ՄՏԿ-ն տարեկան ներկայացնում է հաշվետվություն կատարված աշխատանքների եւ գալիք տարում նախատեսվող միջոցառումների մասին:

11. ԳՏՁ ՄԿ-ի գործադիր մարմնի գործառույթները դրվում են Միջպետական գիտատեխնիկական խորհրդի (ՄԳՏԽ) վրա, որը գործում է ԱՊՀ մասնակից պետությունների Կառավարությունների ղեկավարների Խորհրդի կողմից 1992 թվականի մայիսի 15-ին հաստատած Կանոնադրության հիման վրա՝ նրանում փոփոխություններ եւ լրացումներ կատարելով:

12. ԳՏՁ ՄԿ-ի աշխատակազմի գործառույթները կատարում է ՄԳՏԽ-ի աշխատանքային մարմինը եւ ՄՏԿ գիտատեխնիկական համագործակցության վարչությունը:

13. ԳՏՁ ՄԿ-ի նիստերի մասնակիցների գործուղման ծախսերը հոգում է այդ նիստերին իր ներկայացուցիչներին գործուղող Համաձայնագրի յուրաքանչյուր մասնակից պետություն:

ԳՏՁ ՄԿ-ի ՄԳՏԽ-ի նիստերի եւ նրանց կողմից ստեղծվող աշխատանքային խմբերի եւ գիտական խորհուրդների տեխնիկական սպասարկումը իրականացնում է ՄՏԿ-ի աշխատակազմը:

14. ԳՏՁ ՄԿ-ի որոշումները ընդունվում են.

միաձայնությամբ՝ գիտատեխնիկական համաձայնեցված քաղաքականության անցկացման եւ գիտատեխնոլոգիական ընդհանուր տարածության ձեւավորման եւ գործունեության հետ կապված առաջարկությունների մշակման համար առաջարկությունների պատրաստման ժամանակ,

որակական մեծամասնությամբ (ձայների ընդհանուր թվի առնվազն երեք քառորդը)՝ ԳՏԶ ՄԿ-ի իրավասության մեջ մտնող այլ հարցերով Համաձայնագրի մասնակից պետությունների համար երաշխավորությունների պատրաստման ժամանակ,

պարզ մեծամասնությամբ՝ ընթացակարգային հարցերով:

Սույն Կանոնադրությունը կարող է փոփոխվել կամ լրացվել Համագործակցության Կառավարությունների ղեկավարների Խորհրդի կողմից՝ Տնտեսական միության Միջպետական տնտեսական կոմիտեի, Գիտատեխնիկական զարգացման միջպետական կոմիտեի առաջարկությամբ:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1997 թվականի մարտի 7-ից: